



Doi: 10.56737/2953-7843-2024.10-10

ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՆՆՉՈՒՄ՝

«խաղաղություն» բառը Հայոց լեզվում կիրառվում է տարբեր իմաստներով. լուրջություն, հանգստություն, անդորրություն, հանգարտություն, հաշտություն եւ այլն²: Ռազմական եւ քաղաքական տեսակետից այն նշանակում է պատերազմական բռնություններից ու ապստամբություններից ազատ վիճակ: Սակայն սա դեռ չի ենթադրում մարդկանց միջեւ կատարյալ ներդաշնակություն: Անգամ խաղաղ ժամանակ մարդիկ ունենում են հակամարտություններ, վեճեր, դատավարություններ, ընտրարշավներ ու այլ իրավիճակներ, որոնք հակասում են խաղաղության հիմնական բովանդակությանը:

Պատմության ընթացքում մարդկանց մեծամասնությունը միշտ ցանկացել է երկարատեւ խաղաղություն: Կրոնները եւ փիլիսոփաները կոչ են արել լուծել հակամարտությունները խաղաղ ճանապարհով: Աստվածաշունչը խաղաղարարներին «եռանելի» է համարում (տե՛ս Մատթ. Ե. 9): Հին Հունաստանի եւ Հռոմի փիլիսոփաները սովորեցնում էին եղբայրություն եւ հրաժարում բռնությունից³, իսկ պատերազմը համարում էին խաղաղությունը պահպանելու միջոց⁴: Այնուամենայնիվ, հնա-

^{1*} Ստացվել է՝ 2.07.2024, գրախոսվել է՝ 2.08.2024: Էլ. հասցե՝ hayrmovses@gmail.com:

² Տե՛ս ՄՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, հատոր երկրորդ, Երեւան, 1944, էջ. 233:

³ Օրինակ, ստոիցիզմը քարոզում էր բոլոր մարդկանց հավասարության, եղբայրության եւ սիրո գաղափար, ըստ որի՝ տիեզերքը մի պետություն է, իսկ բոլոր մարդիկ՝ նրա քաղաքացիները. տե՛ս Ս. ԶԱՔԱՐՅԱՆ, Փիլիսոփայության պատմություն, Երեւան, «Նաիրի», 2000, էջ 95:

⁴ Հին հույները դասական առաքինություններից ամենաշատն արժեւորում էին քաջությունը, երբեմն ավելի, քան իմաստությունն ու արդարությունը. ըստ այդմ՝ նրանք մեծապես գնահատում էին պատերազմը՝ որպէս քաջության ուսուցիչ, որտեղ նաեւ փորձվում էր մարդկանց քաջությունը: Ավելի հեռու գնալով այս կոնտեքստում՝ հունական դասական փի-

գույն ժամանակներից աշխարհը հազվադեպ է տեսել երկարատեւ եւ անխախտ խաղաղության շրջան:

Խաղաղությունը բոլոր արժեքների հիմքն է եւ աշխարհի ազգերի ու պետությունների տեսլականը, հույսն ու երազանքը, սակայն իրականում միշտ մնալով դժվարությամբ հասանելի ու ձեռքբերելի: Տարբեր մշակույթների եւ հավատալիքների մարդիկ իրենց տարբեր աշխարհայացքների պատճառով խաղաղությունը հասկանում են երբեմն անգամ հակադիր ձեւերով:

Քրիստոնեության սկզբնական շրջանում Տեր Հիսուս Քրիստոսի՝ խաղաղությանն ու խոնարհությանը վերաբերող խոսքերը որոշ հեղինակներ մեկնաբանել էին որպես պատերազմին առհասարակ դեմ⁵: Համբերությունը, հեզոթյունը, ծառայելու պատրաստակամությունը այն հիմնական հատկանիշներն էին, որոնցով քրիստոնյաներն աչքի էին ընկնում եւ տարբերվում մյուսներից: Անարդարությանը դիմացող-համբերողներին խոստացված էր երկնային արքայությունը (Մատթ. Ե. 10), իսկ հեզերը կոչվում էին «ետերի ժառանգորդներ» (Մատթ. Ե. 5): Խաղաղություն էր հռչակված համայն մարդկությանը, նույնիսկ Ավետարանը կոչվում էր «Խաղաղության Ավետարան» (հմմտ. Հռոմ. Ժ. 15): Քրիստոսի աշակերտները չէին ապրում այնպես, ինչպես իշխանություն ու հզորություն ունեցողները, եւ նրանց դիրքորոշումը հակառակ էր ժամանակի իշխանավորների ընկալումներին: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ այս բնութագրումն առավել հատուկ էր քրիստոնեության վաղ շրջանի հավատացյալներին, հաշվի առնելով Հռոմեական բանակում տիրող կռապատությունը ու քրիստոնյաների հալածանքը⁶, ինչպես նաեւ զինվորների վարքը, որ ուղեկցվում էր բռնություններով ու անբարոյականությամբ⁷:

Խաղաղությունն Աստվածաշնչի առանցքային հասկացություններից է, որը հանդիպում է թե՛ Հին եւ թե՛ Նոր Կտակարաններում: Այն ներ-

լիստիայության խոշորագույն ներկայացուցիչներ Պլատոնն (Ք. ա. 427–347) ու Արիստոտելը (Ք. ա. 384–322) կարծում էին, որ պատերազմն ինքնանպատակ չէ, այլ՝ խաղաղությունը պահպանելու միջոց. տե՛ս A. HOLMES, War and Christian Ethics: Classic Readings on the Morality of War, Michigan, 1975, էջ 13:

⁵ Տե՛ս A. HARNACK, Militia Christi: The Christian Religion and the Military in the First Three Centuries, Translated and introduced by David McInnes Gracie, Philadelphia, 1981, էջ 27:

⁶ Տե՛ս E. RYAN, “The Rejection of Military Service by the Early Christians.” Theological Studies, 1952, Vol. 13, No. 1, էջ 1–32:

⁷ Տե՛ս A. HARNACK, Militia Christi, էջ 65:

կայացնում է ոչ միայն պատերազմի բացակայություն, այլ նաև ներքին հանգստություն, լիարժեքություն, համայնքային բարօրություն եւ ներդաշնակություն Աստծու հետ: Քրիստոնեության մեջ մարդու հոգեւոր կյանքն ուրախ է ու հավասարակշռված այն ժամանակ, երբ խաղաղ ներդաշնակության մեջ է Աստծու եւ իր իսկ եսի հետ⁸:

Սույն հոդվածում նախեւառաջ քննարկվում է խաղաղության սուրբգրային ընկալումը՝ անդրադառնալով Հին Կտակարանի եբրայեցերեն «շալում» եւ Նոր Կտակարանի հունարեն «էյրենե» հասկացություններին ու վերլուծելով դրանց բազմաշերտ նշանակությունը եւ կիրառումը տարբեր շարակարգերում:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ, «ՇԱԼՈՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղության քրիստոնեական ընկալումը խորապես արմատավորված է աստվածաշնչում⁹ եւ հատկապես Հին կտակարանում: Մարգարեները հայտարարում էին, որ գալիք Մեսիան կոչվելու է Խաղաղության Իշխան (տե՛ս Ես. Թ. 6), որ մարդիկ ապրելու են Աստծու պատվիրանների համաձայն, միմյանց հետ խաղաղության մեջ (տե՛ս Ես. ԾԴ. 13) ու այլևս չեն պատերազմի միմյանց դեմ (տե՛ս Ես. Բ. 4, Միքիա Դ. 3–4, Ովս. Բ. 18, Երեմ. ԻԳ. 6, Զաք. Թ. 10): Աստծու թագավորությունը ներկայացվում է սուրբ լեռան պատկերով, որտեղ «Գալլն ու գառը միասին պիտի ճառագեն» (Ես. ԺԱ. 6), իսկ «Մատաղ մանուկն իր ձեռքը պիտի մացնի իծերի բույնը եւ իծերի ձագերի բույնը, ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել եւ խայթել» (Ես. ԺԱ. 8–9, տե՛ս Եզեկ. ԼԴ. 25): Մարդկությունը խաղաղություն կունենա նույնիսկ բնության հետ (տե՛ս Ովս. Բ. 20, Եզեկ. ԼԴ. 26): Այսպի-

⁸ Մարդու ներքին ու հոգեւոր խաղաղության մասին տե՛ս ԵՀն Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամի հետեւյալ օժանդակ ձեռնարկը. Զ. Մ. ՎՐԳ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, Վ. ՔԶՆ. ՄԵԼԻՔՅԱՆ, ԴՈԿՏ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Առաջնորդությունը հակամարտությունների եւ ճգնաժամերի կառավարման գործում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018 թ., էջ 53–61:

⁹ Սուրբգրային մեջբերումներն արվել են ըստ հետեւյալ հրատարակությունների՝ «Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր կտակարանների (թարգմանություն գրաբարից)», Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2021: Աստվածաշունչ, Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի եւ Սաղմոսների, Հունական եւ եբրայական բնագրերից թարգմանված, վերանայված Ա. հրատարակություն, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երեւան, 2017:

սով մեսիական թագավորությունը խոստանում է նոր աշխարհ, որտեղ տիրում է կատարյալ խաղաղությունը¹⁰:

Եբրայեցիներեն բառը, որն արտահայտում է խաղաղության հասկացությունը, «שלום» շալոմ (shalom) բառն է, որն ունի հետևյալ հիմնական նշանակությունները՝ խաղաղություն (peace), ամբողջականություն (completeness), բարեկեցություն (welfare), առողջություն (health): Այն հաճախ օգտագործվում է որպես հարաբերությունների ներդաշնակություն, հաշտություն ու համերաշխություն մարդկանց միջև թե՛ անհատական եւ թե՛ համայնքային առումով¹¹: Այն Հին Կտակարանի կարեւոր աստվածաբանական եզրերից է եւ առավել հաճախ հանդիպում է Սաղմոսաց, Եսայի ու Երեմիա մարգարեների գրքերում հանդես գալով ավելի քան 237 անգամ¹² ու կիրառվելով բազմաթիվ իմաստներով:

Ծննդոց գրքում շալոմի առաջին երկու կիրառումներում նշմարվում է իմաստային տարբերությունը. «Բայց դու խաղաղ հոգով կգնաս քո նախնիների մոտ՝ խոր ծերության հասնելով» (Ծննդ. ԺԵ. 15) եւ «Մեր դեմ չարիք մի՛ գործիր, ինչպես որ մեմֆ քո հանդեպ վատություն չաբեցիմ, այլ լավ վարվեցիմք քեզ հետ եւ բողեցիմք, որ խաղաղությամբ հեռանաս մեզանից» (Ծննդ. 2ԻԶ. 29): Առաջին դեպքում շալոմն ունի «հանգիստ» իմաստը, իսկ երկրորդ դեպքում՝ «անվնաս», սակայն երկուսն էլ ունեն բառի նույն արմատական գաղափարը, քանի որ արտահայտում են ամբողջական լինելը:

Սաղմոսաց գրքում հանդիպում է «խաղաղության մարդ» (ish shelomi) արտահայտությունը. «Քանզի խաղաղության մարդը, որին ես վստահում էի, եւ որն ուտում էր իմ հացը, իմ դեմ հանախակի խաբեություն գործեց» (Սաղմ. Խ. 10): Սա նշանակում է մի վիճակ, որում կարելի է հանգիստ կամ հարմար զգալ ինչ-որ մեկի հետ: Իսկ «Ես խաղաղաբար էի. երբ խոսում էի, մարտնչում էիմ իմ դեմ» (Սաղմ. ՃԺԹ. 7) հատվածում շալոմն արտահայտում է ներդաշնակության եւ լիարժեքության հարաբերություններ, որոնք հակառակ են կռվի եւ պատերազմական վիճակներին: Արտաքուստ

¹⁰ Այս մասին տե՛ս C. DORN, Peace in Christian Thought and Life, World Council of Churches Publications, Just Peace Companion, Second Edition, Geneva, 2013:

¹¹ Տե՛ս H. TEPKER, Shalom in the Old Testament, Concordia Seminary – Saint Louis, 1961, էջ 34:

¹² Տե՛ս W. VINE, "Complete Expository Dictionary of Old & New Testament Words" 1940: Որոշ հեղինակներ շալոմի կիրառման տարբեր թվեր են ներկայացնում՝ հաշվի առնելով շալոմի իմաստային կիրառությունները, օրինակ նշվում է, որ շալոմը Հին Կտակարանում կիրառվում է ավելի քան 250 անգամ՝ 213 հատվածներում: Տե՛ս R. HARRIS, Theological Wordbook of the Old Testament, Volume 1, Chicago, էջ 2401:

եւ ներքուստ հանգիստ կամ խաղաղ լինելու վիճակը եբրայեցերենում արտահայտվում է «խաղաղությամբ» (beshalom) բառի մեջ. «Խաղաղությամբ ու վստահությամբ պիտի ննջենք եւ արթնանանք» (Սաղմ. Դ. 9):

Շալոմի հետ սերտորեն կապված է «բարեկեցություն» իմաստը, մասնավորապես անձնական «որպիսություն» կամ «առողջություն»: Այս իմաստը երեւում է հետեւյալ հարցումի մեջ, մասնավորապես հարցնել բայի հետ օգտագործված leshalom բառակապակցության մեջ. «Հովսեփը նրանց հարցրեց. «Ինչպե՞ս եմ», եւ ավելացրեց. «Ձեր ծերունի հայրը, որի մասին ասել էիք, թե տակավին կենդանի է, ողջ-առողջ է» (Ծննդ. ԽԳ. 27): Այս իմաստով շալոմն օգտագործվում է շատ լեզուներում, որպես ողջունելու ձեւ, որեւէ մեկին դիմավորելիս կամ ճանապարհելիս:

Շալոմը նաեւ նշանակում է «խաղաղություն», որը վկայում է երկու կամ ավելի կողմերի, ընտանիքի անդամների, ընկերների ու բարեկամների միջեւ հարաբերությունների մասին: Շալոմն այս իմաստով արտահայտվում է հետեւյալ խոսքում. «Նրանց նենգավոր լեզուները խոցոտող նետ են: Նրանց բերանի խոսքերը իրենց ընկերոջ հետ խաղաղության մասին են խոսում, իսկ նրանք իրենց սրտում թշնամություն ունեն» (Երեմ. Թ. 7): Բարեկամական հաշտության մասին է խոսում հետեւյալ հատվածը. «Թող իմ ու քո, ինչպես նաեւ իմ ու քո հովիվների միջեւ կոփվ չլինի, որովհետեւ մենք եղբայրներ ենք» (Ծննդ. ԽԳ. 27): Այն քաղաքական իմաստով օգտագործվում է հետեւյալ հատվածում. «Սիսարան հետիոտն փախավ գնաց կինեցի Քաբերի կնոջ Հայելի վրանը, որովհետեւ Ասովրի արքա Հաբինի եւ կինեցի Քաբերի տան միջեւ խաղաղություն էր կնքված» (Դատ. Դ. 17): Պատերազմական իրավիճակում այն օգտագործվում է հետեւյալ հատվածում. «Եթե խաղաղությունն ընդունեն եւ քո առջեւ բաց անեն դարպասները, ապա այդ ֆաղափի մեջ գտնվող ամբողջ ժողովուրդը հարկատու եւ հնազանդ թող լինի քեզ» (Բ Ժր. Ի. 11):

Տեսանող Եսային մարգարեացել էր «խաղաղության Իշխանի» մասին, որը պիտի խաղաղություն հաստատեր աշխարհի վրա (տե՛ս Ես. Թ. 6–7): Եզեկիել մարգարեն խոսում է խաղաղության նոր ուխտի մասին. «Խաղաղության ուխտ եմ կնքելու նրանց հետ, եւ նրանց հետ այդ ուխտը հավիտենական է լինելու» (Եզեկ. ԼԷ. 26): ԺԻԱ. սաղմոսը «Երուսաղեմի խաղաղության» տոնակատարության եւ աղոթքի համար գրված մեծ սաղմոսներից մեկն է. «Հարցրե՛ք Երուսաղեմի խաղաղության ու շենության մասին, դուք, որ սիրում եմ նրան: Թող խաղաղություն լինի քո զորության մեջ, եւ քո ամրոցների աշտարակներում շենություն: Իմ եղբայրների եւ ընկերների

համար քեզ խաղաղություն մաղթեցի» (Սաղմ. ՃԻԱ. 6–8): Աստված խաղաղություն շնորհեց իր ժողովրդին. «խաղաղություն թող լինի Իսրայելի վրա» (Սաղմ. ՃԻԴ. 5):

Աստվածաշնչում կիրառվում է մեկ այլ գոյական՝ shelem, որը հանդիպում է 87 անգամ¹³ եւ նշանակում է խաղաղություն՝ փրկության իմաստով. «Նա Իսրայելի որդիներից երիտասարդներ ուղարկեց, որոնք ողջակեզներ մատուցեցին եւ որպես փրկության զոհ՝ հորթեր զոհեցին Աստծուն» (Ելք ԻԴ. 5):

Որպես բայ Աստվածաշնչում կիրառվում է shalem բառը (ՃԼՇ), որը հանդիպում է 103 անգամ¹⁴ եւ նշանակում է լինել ամբողջական, լինել առողջ (օր.՝ Գ Թագ. Թ. 25): Մեկ այլ դեպքում, որպես բայ կիրառվում է shalam բառը, որը նշանակում է խաղաղություն հաստատել. «Արդար մարդկանց նամապարհները հանելի են Տիրոջ առջեւ. նրանց շնորհիվ թշնամիները դառնում են բարեկամներ» (Առակ. ԺԵ. 28), կամ գործն ավարտին հասցնել. «Պարսպի շինությունն ավարտվեց Իլով ամսի ֆսանհինգին, հիսուներկու օրվա ընթացքում» (Նէեմիա 2. 15):

Shalem-ը գործածվում է նաեւ որպես ածական՝ ամբողջական, կատարյալ իմաստով: Ամբողջական լինելու իմաստով այն առկա է հետեւյալում. «Չորս սերունդ պիտի անցնի, մինչեւ որ քո ժառանգներն այստեղ կվերադառան, որովհետեւ մինչ այդ ամորհացիների մեղքերը դեռ իրենց լուծմին հասած չեն լինի» (Մենդ. ԺԵ. 16), իսկ կատարյալ իմաստով. «Ճշգրիտ ու արդար կշռաբարեւ պետք է ունենաս, նաեւ ճշգրիտ ու արդար չափ, որպեսզի երկար ապրես այն երկրում, որ Տերը՝ քո Աստվածը, իբրեւ ժառանգություն տալու է քեզ» (Բ. Օր. ԻԵ. 15):

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ,

«ԷՅՐԵՆԵ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեական հավատքի փոխանցած ավետիսի հիմքում խաղաղությունն է: Նոր Կտակարանում տեսնում ենք, որ հրեշտակները հայտարարում են, որ Փրկչի ծնունդով երկրի վրա խաղաղություն պետք է հաստատվի (Տէս Ղուկ. Բ. 14): Հիսուս Քրիստոսով Աստված հայտնվում է որպես խաղաղություն կամեցող Աստված: Աստված Իրեն մերժողներին չոչնչացրեց, այլ փորձեց նրանց հաշտեցնել իր հետ, Միածին Որդու մահ-

¹³ Տէս W. VINE, "Complete Expository Dictionary of Old & New Testament Words", 1940:

¹⁴ Նույն տեղում:

վան ու հարուխյան միջոցով (տե՛ս Հռոմ. Ե. 10, Բ. Կորնթ. Ե. 19–21): Պողոս առաքյալը վկայում է. «Նա՛ է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ դարձրեց ու միջնորմ պատը՝ թշնամությունը, վերացրեց իր մարմնով» (Եփես. Բ. 14):

խաղաղությունը հարուցյալ Քրիստոսի պարգեն է իր հետեւորդներին Սուրբ Հոգու միջոցով (Հովհ. ԺԴ. 25–27): Քրիստոնյաները պետք է ամեն ջանք գործադրեն, որպեսզի կարողանան «Հոգու միությունը խաղաղության կապով պահել» (Եփես. Դ. 3): Քրիստոսի խաղաղությունը պետք է իշխի նրանց սրտերում, քանի որ որպես մեկ մարմնի անդամներ, նրանք կանչված են խաղաղության (տե՛ս Կող. Գ. 15): Յոթ երանիները ենթադրում են, որ նրանք որպես Աստծու զավակներ, պետք է խաղաղարար լինեն (Մատթ. Ե. 9): Պողոս առաքյալը հորդորում է քրիստոնյաներին, որ նրանք երբեք չպետք է վրեժխնդիր լինեն, որովհետեւ վրեժխնդրությունն Աստծուն է եւ պիտի բարիով հաղթեն չարին (Հռոմ. ԺԲ. 19, 21): Ինչպես նաեւ հորդորում է. «Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ մնացե՛ք» (Հռոմ. ԺԲ. 18): Սրանում արտացոլվում է Աստծու բարեգթությունը, որ հայտարարում է. «Ողորմություն եմ ուզում եւ ոչ թե զոհ» (Մատթ. ԺԲ. 7): Վրեժխնդրությունից հեռու մնալու հորդորները բազմաթիվ են Նոր Կտակարանում (օրինակ՝ Ղուկ. Զ. 27–36, Ա. Թեա. Ե. 15 եւ Ա. Պետր. Բ. 20–23): Հետեւաբար եկեղեցին կոչված է լինելու Աստծու խաղաղության կրողը:

Նոր կտակարանի գրքերում, որպես խաղաղություն օգտագործվում է «εἰρήνη» (eirene) հունարեն բառը¹⁵: Այս բառը Նոր Կտակարանում գործածվում է 91 անգամ¹⁶: Այն նկարագրում է ներդաշնակ հարաբերություններ մարդկանց միջեւ (Մատթ. Ժ. 34, Գործք Է. 26, Հռոմ. ԺԴ. 19), ազգերի միջեւ (Ղուկ. ԺԴ. 32, Գործք ԺԲ. 20, Հայտն. Զ. 4), ընկերասիրություն (Գործք ԺԵ. 33, Ա. Կորնթ. ԺԶ. 11, Եբր. ԺԱ. 31), ազատություն ոտնձգու-

¹⁵ S^{ԵՍ} W. VINE, “Complete Expository Dictionary of Old & New Testament Words” 1940: խաղաղության երբայերեն շարմի եւ հունարեն էիրենեյի մասին տե՛ս նաեւ G. BROMILEY, Theological Dictionary of the New Testament, edited by Gerhard Kittel and Gerhard Friedrich, translated by Geoffrey W. Bromiley, abridged in one volume, Germany, 1985, էջ 184–187: էյրենեն (էյրենի, Իրենե) հունական դիցաբանության մեջ խաղաղության աստվածուհին է, որի պաշտամունքը լայնորեն տարածված էր Աթենքում: Անտիկ արվեստում պատկերվել է երիտասարդ կնոջ տեսքով՝ առատության եղջյուրով, ձիթենու ճյուղով եւ հասկերով: Մանրամասն տե՛ս Մ. ԲՈՏԿԻՆԻԿ, Մ. ԿՈԳԱՆ, Մ. ՌԱԲԻՆՈՎԻՉ, Բ. ՍԵԼԵՅԿԻ, Դիցաբանական բառարան, Երեւան, 1985, էջ 81:

¹⁶ S^{ԵՍ} The New International Dictionary of New Testament Theology, Editor: Colin Brown, Volume 2, 1975, U.S.A., էջ 780:

թյուններից (Ղուկ. ԺԱ. 21, ԺԹ. 42, Գործք Թ. 31, ԺԶ. 36), կարգ ու կանոն պետության մեջ (Գործք ԻԴ. 2) ու եկեղեցիներում (Ա. Կորնթ. ԺԴ. 33), ներդաշնակ փոխհարաբերություններ Աստծու եւ մարդու միջեւ, որոնք իրականացվում են Ավետարանի միջոցով (Գործք Ժ. 36, Եփես. Բ. 17), դրա հետեւանքով հանգստի եւ գոհունակության զգացում (Մատթ. Ժ. 13, Մարկ. Ե. 34, Ղուկ. Ա. 79, Բ. 29, Հովհ. ԺԴ. 27, Հռոմ. Ա. 7, Գ. 17, Ը. 6): «Խաղաղության Աստուած» արտահայտությունը օգտագործվում է Հռոմ. ԺԵ. 33, ԺԶ. 20, Փիլ. Դ. 9, Ա. Թես. Ե. 23, Եբր. ԺԳ. 20, նաեւ Ա. Կորնթ. ԺԴ. 33, Բ. Կորնթ. ԺԳ. 11 հատվածներում: Բ. Թես. Գ. 16-ում «խաղաղության Տեր» տիտղոսը վերաբերում է Տեր Հիսուսին:

Մինչդեռ Եբրայեցիներեն shalom բառը հիմնականում նշանակում է «ամբողջություն» (տե՛ս դրա օգտագործումը Յեսու Ը. 31-ում՝ «ամբողջական», Հռովթ Բ. 12-ում «լիովին», Նէեմիա Զ. 15-ում՝ «ավարտված»), Աստվածաշնչի Եօթնասնից թարգմանության մեջ շալոմը թարգմանվել է հունարեն հետեւյալ բառերով. eirene (խաղաղություն, բարեկեցություն, առողջություն), eirenikos (խաղաղ, խաղաղասեր), soteria (ազատություն, պահպանություն, փրկություն) ինչպես Ղուկ. է. 50, Ը. 48 համարներում եւ hugiaiein (քաջառողջ):

Նոր կտակարանում որպես բայ օգտագործվում է eireneuo (εἰρηνέω) հունարեն բառը, որը հիմնականում նշանակում է խաղաղության բերել, հաշտեցնել: Տեր Հիսուս պատվիրում է աշակերտներին. «... իրար հետ խաղաղության մե՛ջ եղե՛ք» (Մարկ. Թ. 50), «Եթե հնարավոր է, ուրեմն ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ մնացե՛ք» (Հռոմ. ԺԲ. 18), «իրար հետ խաղաղությամբ ապրե՛ք» (Ա. Թես. Ե. 13): Որպես բայ օգտագործվում է նաեւ eirenopoieo (εἰρηνοποιέω) հունարեն բառը, որը նշանակում է խաղաղություն հաստատել (Կող. Ա. 20):

Նոր կտակարանում որպես ածական օգտագործվում է eirenikos (εἰρηνικός) հունարեն բառը, որը նշանակում է «խաղաղ»: Այն օգտագործվում է որպես «արդար խաղաղության պտուղ» (Եբր. ԺԲ. 11) եւ «ի վերուստ տրված իմաստություն» (Յակ. Գ. 17):

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Աստվածաշնչյան խաղաղության հայեցակարգը բազմաշերտ է եւ ընդգրկուն: Այն վերաբերում է ոչ միայն պատերազմի բացակայության

նը, այլ նաեւ անձնական, հասարակական եւ հոգեւոր կյանքի տարբեր ոլորտներին:

Այնուամենայնիվ, ըստ Ս. Օգոստինոսի՝ խաղաղությունը վերահաստատելու եւ արդարություն ձեռք բերելու համար պետք է պատերազմ մղել¹⁷: Համաձայն Եկեղեցու ձեւավորած դասական եւ ավանդական արադարացի պատերազմի ուսմունքի¹⁸ ամեն դեպքում չէ, որ ուժի կիրառումը համարվում է չար: Դեռ ավելին, պատերազմն իրականում կարող է լինել սիրո դրական արտահայտություն: Աստծու եւ բարեկամի նկատմամբ սերն ստիպում է քրիստոնյաներին՝ արդարացի խաղաղություն փնտրել բոլորի համար, հատկապես իրենց բարեկամների համար, իսկ բանակը հաճախ ամենապատշաճ միջոցն է այդ խաղաղությանը հասնելու համար¹⁹:

Եսայի մարգարեն հստակ ասում է, որ աշխարհում խաղաղությունը տիրելու է ոչ թե տնտեսական ու մշակութային առաջընթացի շնորհիվ, այլ որպես Աստծու պարգև՝ Աստծուն հավատարիմ լինելու արդյունքում, երբ Նոր Կտակարանի լույսով կլուսավորվի աշխարհը²⁰: Աստված կարող էր իսպառ վերացնել պատերազմները, սակայն այդպես չարեց, որպեսզի ազգերը խրատվեն. «Նա դատաստան պիտի տեսնի հեթանոսների մէջ ու պիտի յանդիմանի բազում ժողովուրդների» (Ես. Բ. 4): Իսկ քանի դեռ մարդիկ չեն խրատվել, պատերազմները միշտ կլինեն, որովհետեւ մարգարեն չի ասում, թե բնավ պատերազմ չի լինի, այլ ականարկում է, որ համընդհանուր բարին տիրելու դեպքում «ազգ ազգի վրայ սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւ չեն սովորելու պատերազմել» (Ես. Բ. 4): Քանզի երբ Աստծու կամքը զորանում է, հակամարտությունները վերանում են²¹, համաձայն Իր խոսքի. «Խաղաղություն եմ թողնում ձեզ» (Յովհ. ԺԴ. 27): Ապագա պատերազմների հաղթահարման մասին նմանատիպ խոստում կա նաեւ Ով-

¹⁷ Տէս R. BAINTON, Christian Attitudes Toward War and Piece, էջ 96:

¹⁸ Արդարացի պատերազմի տեսության մասին տես Մ. ՎԻԳ. ՍԱՐԳՍՅԱՆ, Արդարացի պատերազմի տեսությունը: Սբ. էջմիածին, 2021, ինչպես նաեւ հետեւյալ հոդվածը՝ Մ. ԱՐՂ. ՍԱՐԳՍՅԱՆ, Արդարացի պատերազմի տեսությունը. «էջմիածին», 2016, 2, էջ 109–120:

¹⁹ Տէս D. COLE, When God says war is right, The Christian's Perspective on When and How to Fight, USA 2002, էջ 7: Պատերազմի, որպես սիրո արտահայտության, մասին ավելի մանրամասն տես նաեւ C. MATHEWES, Understanding Religious Ethics, UK, 2010, էջ 189, P. RAMSEY, The Just War, Force and Political Responsibility, Savage, Maryland: Littlefield, Adams, 1983, էջ 143:

²⁰ Տէս Գ. ՍԿԵՆՈՍՅԻՆ (ԺԳ. Դ.), Մեկնություն մարգարեությունն Եսայեայ, Ս. էջմիածին, 2010, էջ 66:

²¹ Հմմտ. նույն տեղում, էջ 67:

սէէի մարգարեությունում. «Այն օրը ուխտ կկնքեմ նրանց հետ՝ անապատի գազաններով, երկնի թռչուններով եւ երկրի սողուններով հանդերձ. եւ աղեղը, սուրն ու ճակատամարտը կը վերացնեմ երկրից եւ կը բնակեցնեմ քեզ յոյսով» (Ովս. Բ. 18): Եթե Իսրայելի ժողովուրդը դարձի գար եւ հավատարիմ լիներ Տիրոջը, ինչպես Եգիպտոսի գերությունից ազատվելու ժամանակ, ապա Աստված խաղաղություն պիտի տար նրանց, եւ նրանք պիտի սրերից խոփեր պատրաստեին, իսկ նիզակներից՝ մանգաղներ, ու ապրեին բարի հույսով²²:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Խաղաղություն, լուրջություն, հանգստություն, անդորրություն, հանդարտություն, հաշտություն, բռնությունից ազատում, պատերազմից զերծ վիճակ, մարդկային փոխհասկացողություն, հակամարտությունների լուծում, խաղաղարար, եղբայրություն, սեր, համբերություն, հեզություն, ծառայություն, ներքին հանգստություն, ներքին լիարժեքություն, բարօրություն, Աստծու հետ միություն, քրիստոնեական առաքինություն, Ավետարան, խաղաղության Ավետարան, Նոր Կտակարան, Հին Կտակարան, շալոմ, էյրենե:

РЕЗЮМЕ

В статье анализируется библейское понятие мира, охватывающее как внешний, так и внутренний аспекты человеческого существования. Автор проследживает развитие представления о мире в Ветхом и Новом Заветах, сосредотачиваясь на еврейском термине шалом и греческом эйрене. Подчеркивается, что в библейской традиции мир — это не просто отсутствие войны, но состояние целостности, справедливости, гармонии с Богом и ближним. Особое внимание уделяется пророчествам о Мессии как «Князе мира» и христианскому пониманию мира как дара Воскресшего Христа. Также рассматриваются богословские

²² Տե՛ս Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարեից, արարեալ երանելոյն Ներսիսի Համբրօնացոյ արքեպիսկոպոսի Տարսօնի Կիլիկեցոց, ուղղափառ վարդապետութեամբ եւ լուսաւոր բանիւք՝ յօգուտ մանկանց Կաթողիկէ Սրբոյ Եկեղեցոյ, Կոստանդինուպօլիս, 1825–1826, էջ 17:

основания для понятия «справедливой войны» в христианской традиции, и роль мира как центральной этической ценности в личной и общественной жизни верующего.

SUMMARY

This article explores the concept of peace in the Bible, highlighting both its external and internal dimensions. It traces the development of the idea from the Old to the New Testament, focusing on the Hebrew term *shalom* and the Greek *eirēnē*. The biblical notion of peace is presented not merely as the absence of conflict but as a state of wholeness, justice, and harmony with God and fellow human beings. Special attention is given to Messianic prophecies portraying the Messiah as the “Prince of Peace” and to the Christian interpretation of peace as the gift of the Risen Christ. The study also touches upon the theological basis of the doctrine of “just war” within Christian thought and emphasizes peace as a fundamental ethical principle in both personal and communal life.

